VEOLIA
Ջուր

ԱՊՐԻԼ 2024

ԱՄՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ

Երևան 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ 3
1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում 3
1.2. Ջրաչափերի փոխարինում և տեղադրում 7
1.3. Ջրահեռացման համակարգ 8
1.4 Կեղտաջրերի մաքրում և հեռացում 9
1.5 Էներգահամակարգ 9

2. Առևտրային տնօրինություն 10
2.1. Բաժանորդների տվյալներ 10
2.2. Հասույթ 11
2.3. Գանձում 12
2.4. Դեբիտորական պարտքեր /Իրավաբանական վարչություն/ 12
2.5. Ջրաչափեր 13
2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում 14

3. Տեխնիկական տնօրինություն 15
3.1. Ջրամատակարարման շարունակականություն 15
3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում 16
3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ 18
3.4. Ջրատար համակարգի բարելավում 19
3.5. Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայություն 19
3.6. 1-85 թեժ գիծ 20

4. Լրատվական ծառայություն 21

5. Որակի, առողջության և անվտանգության բաժին 23
5.1. Դասընթացներ/սեմինարներ 23
5.2. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացնող միջոցառումների կիրառում 25
5.3 Վեոլիա Գրուպի ԲՌԿ ստանդարտների ինքնագնահատման, ընկերության համակարգում ներդրման, նոր ԲՌԿ ստանդարտների հայերեն լեզվով թարգմանության և ադապտացման աշխատանքներ 26
5.4. ԱՊՄ-ների և ԿՄՊ-ների ձեռքբերման և բաշխման աշխատանքներ 26

ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ժամանակահատվածում Վեռլիա Ընկերության սպասարկման տարածքում իրականացվել են վթարա-որոնողական և ջրագծերի և կոյուղագծերի վերակառուցման, ջրակորուստների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված աշխատանքներ, մասնավորապես՝

Կոտայքի մարզ

- Կոտայքի մարզի Բալահովիտ գյուղի 8 փ, 1-ին, 9-փ. 1-ին և 2-րդ նրբանցք փողոցների թաղամասի ջրամատակարարումը իրականացվում է d=300մմ պող, խողովակով որի L=1400գծ/մ հատվածը ամբողջովին քայքայված վիճակում էր գտնվում և հաճախակի էին վթարները:

Արաբկիր շ/տ-ի աշխատակիցների կողմից քայքայված վիճակում գտնվող ջրագիծը ամբողջովին փոխարինվել է d-250մմ L=1400գծ/մ պ/է խողովակով: Փոխարինվել է նաև դեպի Բալահովիտ 8 փողոցը սնող d-160մմ L180մմ պ/է խողովակաշարը, որը գտնվում էր անբավարար աշխատանքային վիճակում: Կատարված աշխատանքների արդյունքում մ. Կոտայք, հ. Աբովյան, գ. Բալահովիտ 8 փ, 1-ին, 9-փ. 1-ին և 2-րդ նրբանցք փողոցների և տարածքների ջրամատակարարումը իրականացվում է անխափան:

Գեղարքունիքի մարզ

- Սևան» տեղամասի աշխատակիցների կողմից ք.Սևան, Աբովյան փողոց 1 շենք հասցեում իրականացվել են d=150մմ L=20գծմ պէթ ծալքավոր խողովակի մոնտաժման և դիտահորի վերանորոգման աշխատանքներ, ինչպես նաև Սևան համայնքի Վարսեր բնակավայրի նոր կառուցված ջրագծի միացման կետում տեղադրվել է d=100մմ փական:

ք. Արթիկ

- Արթիկ ՇՏ-ի հետ համատեղ ուսումնասիրություն կատարվեց Արթիկ քաղաքի 1.2 ենթագոտում, որտեղ գիշեր-ցերեկ չափումները ցույց էին տվել մոտ 4-6 լ/վ ջրակորուստ: Ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվեցին վթարված D-50մմ թուջե և պողպատե ջրագծեր, որոնք խցափակվեցին, ինչպես նաև քաղաքի

ծայրամասում հին պահեստներ սնուցող D-150մմ թուջե վթարված ջրագիծը, որը ևս խցափակվեց Արթիկ ՇՏ-ի կողմից: Խցափակվեց նաև հին չգործող ՕԿՋ-ի ելքի D-150մմ թուջե ջրագիծը, որով հետադարձ ջուր էր լցվում հատկապես գիշերային ժամերին: Արդյունքում բոլոր աշխատանքների արդյունքում 1.2 ենթագոտու ծախսը 8 լ/վ-ց իջեցվեց 2 լ/վ-ի որից 1,2 լ/վ սնում է սեփական սեկտորին, իսկ մնացած մասը՝ հին թուջե ջրագծերին: Արդյունքում տնտեսվեց Q = 6 լ/վ ջրաքանակ:







Արթիկ ՇՏ-ի հետ համատեղ ուսումնասիրության ենթարկվեց 1.3 ենթագոտին, որը իր մեջ ներառում է հիմնականում Արթիկ քաղաքի հին արտադրական համալիրները, որտեղ սնուցումը դեռևս իրականացվում է հին D-100մմ թուջե ջրագծով Գործարանային փողոցով անցնող մոտ L =2000մ ջրագծի վրա հայտնաբերվեց թվով 4 վթար, որից մեկը հին ավտոտրանսպորտի վերանորոգման գործարանի տարածքում, որի սնուցումը միացման կետում խցափակվեց Արթիկ ՇՏ-ի կողմից: Նախնական 6լ/վ ջրաքանակը վթարների վերացումից հետո դարձավ 2,9 լ/վ: Արդյունքում տնտեսվեց 3 լ/վ ջրաքանակ:

Արթիկ ՇՏ-ի հետ համատեղ ուսումնասիրվեց նաև 4.2 ենթագոտին, որը Արթիկ քաղաքի Լմբատ 2 թաղամասն է հիմնականում բազմաբնակարան շենքերով, որի ջրաքանակը 7լ/վ է: Հայտնաբերվեց թվով 3 վթար, որից 2-ը խմոցների ջրագծի վրա: Վթարների վերացումից հետո տնտեսվեց 1,5-2 լ/վ ջրաքանակ՝ ջրաքանակը իջեցնելով մինչև 5 լ/վ:

ք. Սևան

■ Գրիբոյեդով փողոցում իրականացված վթարարոնողական աշխատանքների արդյունքում 4-րդ շենքի տակ հայտնաբերվեց վթար D = 50մմ ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց Q = 1,5լ/վ ջրաքանակ:



■ Նաիրյան փողոցում իրականացված վթարարոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց գաղտնի վթար D = 200մմ թուջե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց Q = 3լ/վ ջրաքանակ:

■ Վարսեր գյուղում և հարակից դաշտերում իրականացված վթարարոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց ընդհանուր թվով 4 վթար: Արդյունքում տնտեսվեց Q = 5լ/վ ջրաքանակ:



ք. Գավառ

■ Հայրավանք գյուղում իրակա-նացված վթարարոնողական աշխա-տանքների արդյունքում հայտնաբերվեց գաղտնի վթար D = 110մմ պէ ջրագծի վրա: Արդյունքում տնտեսվեց Q = 4լ/վ քանակությամբ:

ք. Վանաձոր

■ Լեռնապատ գյուղում իրականացված վթարարոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց գաղտնի վթար D = 25մմ պէ ջրագծի վրա: Արդյունքում տնտեսվեց Q = 1լ/վ ջրաքանակ:

ք. Վեդի

Վեդի քաղաքում իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց վթար «Շրջանցող» կոչվող D = 63մմ պէ ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց Q=4լ/վ ջրաքանակ:

ք. Մասիս

Մասիս ՇՏ հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց թվով 5 վթար Արարատյան 1/2 պոմպակայանից դեպի գյուղեր ուղղության՝ D = 530մմ ջրագծի վրա: Պոմպի աշխատանքի ժամանակ հոսակորուստը գնահատվում էր Q = 80լ/վ: Վթարը վերացվեց Մասիս ՇՏ-ի կողմից:






ք. Երևան

Արաբկիր տեղամասի աշխատակիցների հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց վթար Կոմիտաս 36գ շենքի մոտ, դիտահորի մեջ Փափազյան 16 պոմպակայանի ելքի՝ D = 100մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց Q = 5լ/վ ջրաքանակ:





Կենտրոն տեղամասի աշխատակիցների հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց գաղտնի վթար Տիգրան Մեծ 40/80 հասցեի մոտ, D = 80մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց Q = 5լ/վ ջրաքանակ:

Մաշտոց տեղամասի աշխատակիցների հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց գաղտնի վթար Պռոշյան համայնքի Իսահակյան 15 հասցեի հարևանությամբ, D = 100մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց Q = 4լ/վ ջրաքանակ:

Մաշտոց տեղամասի աշխատակիցների հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց գաղտնի վթար Պռոշյան համայնքի Երևանյան փողոցում, D = 100մմ թուջե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց Q = 5լ/վ ջրաքանակ:

■ Հյուսիս տեղամասի աշխատակիցների հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց գաղտնի վթար Տորք Անգեղի ձորում, Ջրվեժ Մեծ ՕԿՋ-ի ելքի՝ D = 400մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց Q = 3լ/վ ջրաքանակ:

■ Շենգավիթ տեղամասի աշխատակիցների հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց վթար Արցախի փողոցը սնող ջրագծի վրա, D = 400մմ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց Q = 3լ/վ ջրաքանակ:

Ապրիլ ամսվա ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում կատարված աշխատանքները հակիրճ նկարագրվում են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Աշխատանքների հակիրճ նկարագիր

Կատարված աշխատանքները	*Չափման միավոր*	*Քանակ*
Չափում հոսքաչափով	տեղ	862
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	26314
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	29946
Հոսակորուստի որոնում կորելյատորով	մ	1303
Ջրաչափական հանգույնցներ ուսումնասիրություն, սխեմաների կազմում	հատ	0
Շահագործումից հանված ջրագիծ	մ	1748
Կառուցված ջրագիծ	մ	10906.5
Կառուցված կոյուղագիծ	մ	942
Վերացված գաղտնի վթարներ	հատ	13
Փոխարինված փական	հատ	137
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց	հատ	449
Մաքրված դիտահոր	հատ	1953
Գաղտնի վթաների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	8.7
Վերացված վթարներ	*Չափման միավոր*	*Քանակ*
Ջրամատակարարման ցանցում	հատ	1147
Ջրահեռացման ցանցում	հատ	1390
Պոմպակայաններում	հատ	0
Մաքրված անձրևընդունիչ	հատ	0

Ապրիլ ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Վերացված վթարների քանակային նկարագիր

	Պոլիէթիլենային խողովակներ (հատ)	*Մետաղական խողովակներ (հատ)*	*Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ*
Ընդամենը	991	830	1014

1.2. ՋՐԱՉԱՓԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ

Ստորև Աղյուսակ 3-ում ներկայացված է ապրիլ ամսվա ընթացքում տեղադրված, փոխարինված կամ սահմանազատման կետեր տեղափոխված տարբեր տրամաչափերի ջրաչափերի քանակը:

Աղյուսակ 3. Տեղադրված, փոխարինված, տեղափոխված ջրաչափեր

Կատարված աշխատանքներ	Ջրաչափի տրամագիծ, մմ										
	15	20	25	30	32	40	50	65	80	100	Ընդամենը
Տեղադրված	206	3	2	0	0	0	1	0	0	0	212
Փոխարինված	427	10	2	0	5	6	7	0	2	1	460
Տեղափոխված											0
Տեխ. ակտ	187	1	0	0	1	4	2	0	0	0	195
Ընդամենը	820	14	4	0	6	10	10	0	2	1	867

Ընդհանուր առմամբ տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր են տեղափոխվել 15-100 մմ տրամաչափի 867 ջրաչափ: Կատարված աշխատանքների 95%-ը վերաբերել է 15 մմ ջրաչափերին:

1.3. ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ապրիլ ամսվա ընթացքում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Աշխատանքների հակիճ նկարագիր

h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում մ	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում տեղ	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում գծ/մ
1	Արաբկիր	1970	299	186
2	Քանաքեռ-Զեյթուն	0	256	30
3	Մաշտոց	140	197	188
4	Շահումյան	0	233	3
5	Շիրակ	1576	481	16
6	Արթիկ	185	94	6
7	Ապարան	0	61	6
8	Ալավերդի	1900	33	30
9	Աշոցք	0	8	0
10	Բերդ	120	8	16
11	Իջևան	0	57	108
12	Լոռի	0	260	0
13	Նոյեմբերյան	0	16	0
14	Սպիտակ	0	22	0
15	Ստեփանավան	1450	20	0
16	Թալին	0	7	0
17	Տաշիր	0	7	0
18	Չարենցավան	0	89	12
19	Աբովյան	0	95	21
20	Հրազդան	0	86	56
21	Կենտրոն	150	235	0
22	Հյուսիս	20	242	48
23	Հարավ	0	276	17
24	Էրեբունի	380	181	50
25	Արմավիր	0	110	0
26	Արտաշատ	0	141	0
27	Էջմիածին	0	167	178
28	Աշտարակ	2420	42	31
29	Արարատ	0	82	24
30	Մասիս	0	50	12
31	Գավառ	225	32	0
32	Սևան	390	91	26
33	Մարտունի	0	41	0
34	Վարդենիս	400	6	0
35	Ճամբարակ	0	27	0
36	Դիլիջան	570	51	12
37	Վայք	540	16	0
38	Եղեգնաձոր	60	12	0
39	Ջերմուկ	0	41	0
40	Սիսիան	0	35	14
41	Գորիս	0	54	30
42	Կապան	870	53	3
43	Մեղրի	0	57	48
	Ընդամենը	13366	4371	1171

1.4. ԿԵՂՏԱՋՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ ԵՎ ՀԵՌԱՑՈՒՄ

Ընթացիկ ամսում «Կեղտաջրերի մաքրման կայանների» ծառայության ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարավերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել են հետևյալ աշխատանքները.

- Դիլիջանի կեղտաջրերի մաքրման կայանում խոշոր մասնիկների մամլիչը դադարել էր աշխատել: Զննման արդյունքում պարզվեց, որ լիսեռի առանցքակալը շարքից դուրս է եկել, ինչի հետևանքով այն դադարել էր աշխատել: Արդյունքում փոխարինվեց խցուկը և առանցքակալը, և այժմ բոլոր սարքավորումները գործում են բնականոն ռեժիմով:
- Սևանի N5 կեղտաջրերի պոմպակայանում խցանվել էին պոմպերի բանվորական անիվները, որի արդունքում պոմպերի արտադրողականությունն ընկել էր: Արդյունքում պոմպերը դուրս բերվեցին հորից, մաքրվեցին և ետ տեղադրվեցին: Մաքրվեցին նաև հակադարձ փականները: Այժմ պոմպակայանն աշխատում է անխափան:
- Վարդենիսի կեղտաջրերի պոմպակայանում շարքից դուրս էին եկել էլեկտրական լողանային անջատիչները, որի արդյունքում պոմապակայանը դադարել էր աշխատել ավտոմատ ռեժիմով: Արդյունքում դրանք փոխարինվեցին և այժմ պոմպակայանն աշխատում է բնականոն ընթացքով:
- Գավառի կեղտաջրերի պոմպակայանում խցանվել էին հակադարձ փականները, որի արդյունքում պոմպերի արտադրողականությունն ընկել էր: Ի վերջո դրանք մաքրվեցին և այժմ պոմպակայանն աշխատում է անխափան:

Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե էլեկտրական, թե մեխանիկական), կատարվել են կարգավորումներ:

Աղյուսակ 5. Աշխատանքների հակիրճ նկարագիր

հ/հ	*Գտնվելու վայրը*	*Կառույցի անվանումը*	*Մղված կեղտաջրերի ծավալը մ³*	*Մաքրված կեղտաջրերի ծավալը մ³*	*Կեղտաջրից առանձնացած կեղտ տ*
1	ք. Գավառ	«Գավառ» ԿՄԿ	0	57,859	28,8
2	ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	0	46,758	32,4
3	ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	0	166,863	5,4
4	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	0	58,162	10,8
5	ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	0	120,774	27
6	ք. Սևան	«Սևանի» N3 պ/կ	17,782	0	0
7	ք. Սևան	«Սևանի» N5 պ/կ	15,595	0	0
8	ք. Գավառ	«Գավառ» պ/կ	12,500	0	0
9	ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	9,790	0	0
10	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	0	0	0

1.5. ԷՆԵՐԳԱՀԱՄԱԿԱՐԳ

Թվով 425 բակային պոմպակայաններում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում թվով 409 հասցեում վերացվել են հայտնաբերված թերությունները:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ

2.1. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: 01.05.2024 թվականի դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել 620,534 պայմանագիր: Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	2024թ. ապրիլ ամսին ծառայություններ ստացած բաժանորդների թիվ	Կնքված պայմանագրերի քանակը	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	678,392	590,790	87,1
	Իրավաբանական անձ	32,921	29,744	90,3

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բաժանորդների ընդհանուր քանակ	Ծախսող բաժանորդների քանակ	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	750,116	589,254	78,6
	Իրավաբանական անձ	38,467	27,471	71,4

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով, հնարավորության դեպքում, լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի համապատասխան աշխատակիցների կողմից: Միաժամանակ համեմատական վերլուծություններ են կատարվում այլ ծառայություններ մատուցող ընկերությունների տվյալների հետ:
Առևտրային տեղամասերի սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել և տվյալների բազա է մուտքագրվել թվով 820 նոր բաժանորդ:

2.2. ՀԱՍՈՒՅԹ

Շարունակվում է ջրաչափերի փոխարինման գործընթացը: Պիլոտային ծրագրերին (Շիրակ, Լոռի, Սևան և այլն) զուգահեռ փոխարինվում են նաև այլ տարածքներում անսարք ջրաչափերը: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր՝ բարձրակագ և ավելի զգայուն ջրաչափերով: Խոշոր սպառում ունեցող իրավաբանական բաժանորդների ջրաչափերը հնարավորության դեպքում միացվում են Լոկատոր համակարգին՝ ծախսերը պարբերաբար, առանց այցելության, առցանց հսկելու նպատակով:
Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը նվազեցնում կամ գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը: Գրեթե ամբողջովին փոխարինվել և բաժանորդների տարածքներից դուրս են տեղափոխվել գործող բուժ. հաստատությունների, զին. մասերի, դպրոցների և մանկապարտեզների ջրաչափերը:
Փոխարինված ջրաչափերն ուղարկվում են պարտադիր լաբորատոր ստուգաչափման: Ապրիլ ամսվա ընթացքում ստուգաչափվել է 5223 ջրաչափ:

Տնօրինություն	Սպառողներ	Սարքին	Անսարք	Միջամտած	Ստուգաչափված ջրաչափերի քանակ առ 04.2024
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	2841	1594	502	4937
	Իրավաբանական անձ	177	74	35	286
	Ընդամենը	3018	1668	537	5223

Ստուգաչափված ջրաչափ



Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասն ունի խնդիրներ: Օրինակ՝ ապրիլ ամսին փոխարինված 5223 ջրաչափերի մոտ 42 %-ը (կամ 2205 ջրաչափ) անսարք է կամ առկա է արտաքին միջամտություն:
Միջամտած ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:
Ընթացիկ ամսում լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկվել է 328,888 մ^3 հասույթ:
Ստորև՝ գրաֆիկային տեսքով, բերված են 2024թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ.

Հասույթ



2.3 ԳԱՆՁՈՒՄ

Ապրիլ ամսին նախորդ ամսվա ձևավորված հասույթի համեմատ գանձումը կազմել է 2,340 մլն. դրամ (96 %):
Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարումները սահմանված ժամկետում ապահովելու նպատակով ընկերությունում կիրառվում են բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր՝ փոստային առաքում, ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն:
Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով՝ հնարավորության դեպքում իրականացվում են պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ՝ մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը, սակայն, հաշվի առնելով որոշակի հանգամանքներ, հատկապես սահմանամերձ բնակավայրերում, հաշվետու ամսվա ընթացքում մեր կողմից չեն իրականացվել նաև պայմանագրով և գործող կարգով նախատեսված՝ անհատական ջրամատակարարման դադարեցումներ:
Այս իրավիճակը, բնականաբար, իր բացասական ազդեցությունն է ունեցել գանձման բարձր, նախատեսված ցուցանիշների ապահովման գործում:

2.4 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ / ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ/

Համեմատաբար մեծ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով Առևտրային տնօրինության աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը:
Ապրիլ ամսվա ընթացքում Առևտրային տնօրինության կողմից կնքվել է թվով 177 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 21.3 մլն դրամ ընդհանուր գումարով:
Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերի չափը, և պարտատերերի ցուցակները ներկայացվում են իրավաբանական վարչություն:

Ստորև աղյուսակով ներկայացվում է դեբիտորական պարտքերի և հայտնաբերված խախտումների վերաբերյալ արձանագրություններով դատարան ներկայացված գործերը:

Դատարան ներկայացված գործերի քանակը շարունակական		Բավարարված		Մերժված		2017-2024թթ. ընթացիկ որոշներ		ԴԱՀԿ ներկայացված գործեր	
քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար
31,059	4,266,793,850	19,946	2,299,281,086	1,008	226,867,557	11,113	1,967,512,764	12,242	1,457,606,090

Ինչպես ցույց է տալիս աղյուսակը՝ դատարան ներկայացրած գործերի ընդհանուր քանակի 64 %-ն արդեն բավարարված է և ընդամենը 3 %-ը՝ մերժված:

Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տնօրինություն	Պարտքը 01.05.2024թ. դրությամբ (մլն. ՀՀ դրամ)	Այդ թվում հուլիս ամսվա հասույթ (մլն. ՀՀ դրամ)
Առևտրային, այդ թվում	11,595	2,580
Բնակիչ-բաժանորդներ	8,195	1,785
Իրավաբանական անձեր	3,400	795

Հարկ է նշել, որ մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չեն առնված բաժանորդների՝ նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:

Շուրջ 410.1 մլն. ՀՀ դրամը կուտակվել է երկու բաժանորդներին մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց մեծածախ սակագնով պարբերաբար չվճարելու պատճառով: Դրանք են՝ «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ը և «ՀՀ Արարատի մարզի Ազատաշեն» համայնքը:

2024 թ.դեբիտորական պարտքերի շարժը / մլն.դրամ (Մարզեր)



2.5 ՋՐԱՉԱՓԵՐ

Բաժանորդների տվյալների բազայում 01.05.2024թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
		Ընդամենը	Այդ թվում ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում ծախսող	%
Առևտրային	Ջրաչափով	721,235	588,268	81.56	37,431	27,461	73.36
	Առանց ջրաչափի	28,881	986	3.41	1,036	10	0.97

Տվյալների բազայում 01.05.2024թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տնօրինություն	Բնակիչ-բաժանորդներ			Իրավաբանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում՝ ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում՝ ժամկետանց	%
Առևտրային	892,295	383,155	42.94	40,845	6,571	16.05

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:
Հաշվետու ամսվա ընթացքում տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) 6757 ջրաչափական սարք: Այդ թվում՝ նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 1007 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:
Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճշգրիտ հաշվառմանը:

ՊԿԱԾ տեղադրված ջրաչափեր

Հասցե	Ջրաչափերի ընդհանուր քանակ	Տեղադրված ջրաչափերի քանակ	%
գ.Քասախ	2484	2045	81.9
գ.Պռոշյան	1719	1129	66.5
ք.Հրազդան, Միկրոշրջան թաղ.	6029	1972	32.4

Տեղամասերում ընկերության տնօրինությունների ուժերով իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիր:
Ջրաչափերի փոխարինման աշխատանքներ են իրականացվել մի շարք տեղամասերի սպասարկման տարածքներում: Առկա անսարք և փոխարինման ենթակա ջրաչափերից արդեն փոխարինվել է՝ Լոռի տեղամասի սպասարկման տարածքի տարբեր հասցեներում՝ 19444, Շիրակ տեղամասի սպասարկման տարածքում՝ 17851, Գորիս տեղամասի սպասարկման տարածքում՝ 4946, Կապան տեղամասի սպասարկման տարածքում՝ 5746, Սիսիան տեղամասի սպասարկման տարածքում՝ 2865, Արարատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 5064 և Արտաշատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 8343 ջրաչափական սարք:

2.6 ԱՊՕՐԻՆԻ ՄԻԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՑՈՒՄ

Առևտրային տնօրինության տեղամասերի աշխատակիցների ամենօրյա աշխատանքի մաս են կազմում ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Կազմված արձանագրություններն «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, ապօրինություն կատարած անձիք սահմանված կարգով ծանուցվում են, նրանց են ներկայացվում վերահաշվարկվող, վճարման ենթակա գումարների չափերը, իսկ տվյալ հասցեները փոխանցվում են տարածաշրջանի շահագործման տնօրինությանը՝ ջրազրկում իրականացնելու նպատակով:
Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկված ջրածախսերի տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:

Տնօրինություն	Քանակ	Խ.մ.	Գումար (ՀՀ դրամ)
Առևտրային	528	305,623	56,187,842

Ապօրինությունների հայտնաբերման և արձանագրությունների կազմման գործառույթը, տեղամասերի առևտրային ծառայության աշխատակիցներից բացի, իրականացվում է նաև Գլխավոր տնօրինության առևտրային վերահսկողության աշխատակիցների կողմից:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ

3.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված է Երևան քաղաքի ապրիլ ամսվա շարունակականության տվյալները, որը կազմում է 96.2%, ինչը 0.5%-ով ցածր է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշների համեմատ:
Շարունակում է գործել ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման գրաֆիկը, որը համաձայնեցվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:

Ջրամատակարարման շարունակականություն Երևան



	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր
0	1											
2022	96.4%	96.5%	97.1%	97.1%	97.0%	96.8%	96.6%	96.9%	97.1%	96.8%	96.7%	96.5%
2023	96.6%	96.5%	96.8%	96.8%	96.7%	96.6%	96.3%	96.3%	96.6%	96.8%	96.7%	96.5%
2024	96.4%	96.3%	96.3%	96.2%								

Հաշվետու ամսվա ընթացքում «Շարունակականության և մոնիթորինգի բաժնի» կողմից ՇՏ-ներում կարգաբերվել է թվով 44 ՃԿՓ:
Ստորև ներկայացված է կարգաբերված ՃԿՓ-ների գրաֆիկներից մի քանիսը՝



Երևան քաղաքը սնող Գառնի, Ապարան, Արզնի 1, Արզական, Գյումուշ 1,2 և Կաթնաղբյուրի ջրատարների ինքնահոս ջրաքանակը 2024թ-ի ապրիլ ամսին 2023թ-ի նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 142 լ/վ-ով, իսկ Երևան քաղաքի ջրարտադրության համար էլ. էներգիայի ծախսն ավելացել է 176 հազար կՎտ-ով, ինչը երևում է ստորև ներկայացված գրաֆիկներում:



3.2. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում էլ. էներգիայի ծախսը Երևան քաղաքում ավելացել է 8875 կՎտ/ժ (1,98%), այն դեպքում երբ նորակառույց շենքերի 13 պոմպակայան ավելացել է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հաշվեկշռում՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ: Այդ 13 պոմպակայանների էլ. էներգիայի ծախսը միայն կազմում է 4908 կՎտ/ժ, իսկ առանց այդ պոմպակայանների էլ. էներգիայի ծախսը կավելանար 3967կՎտ/ժ:

Երևան քաղաքի բակային պոմպեր (առանց Խարբերդի պոմպակայանի)



Երևան քաղաքի բակային պոմպեր

Հաշվետու ժամանակահատվածում գույքագրվել են 146 էլ. հաշվիչներ: Ջնջվել է 5 նոր ընդունվող պոմպակայան: Ամենօրյա կարգով ընթերցվել և հաշվետվություն է ներկայացվել ջրարտադրության խոշոր պոմպակայանների էլ. էներգիայի ծախսի վերաբերյալ: «ՀԷՑ» ՓԲԸ-ից ձեռք է բերվել տեխ. պայման (Դավիթ Բեկի հոսքաչափ):
Ստուգայցերի ընթացքում պարզվել է, որ «ՀԷՑ» ՓԲ ընկերության աշխատակիցների կողմից ութ հասցեներում կատարվել է հավելագրում՝ ընդհանուր 21679 կՎտ/ժ: Հավելագրումների վերաբերյալ կազմվել է համապատասխան արձանագրություն և գրավոր ներկայացվել է «ՀԷՑ» ՓԲԸ, ինչի արդյունքում ապրիլ ամսվա փոխադարձ ակտերի ծախսը նվազեցվել է 1078512.92 ՀՀ դրամով:
Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի ԿՈՒՊ (կարգավորվող ուղիղ բաղադրիչում) և ՕԱԾ (օր առաջ շուկա) կատարվել է առևտրային գործընթաց, որի արդյունքում տնտեսվել է համապատասխանաբար 9,533,374 ՀՀ դրամ (առանձ ԱԱՀ) և 122,337 ՀՀ դրամ (առանձ ԱԱՀ): Կատարվել է էլ. էներգիայի հաշվառում, գործարքների արդյունքում ձևավորված ակտերի ստուգում, հաստատում:

Պոմպակայանների ուսումնասիրություն

Թվով 29 խոշոր պոմպակայանում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում 23 պոմպակայանում վերացվել են հայտնաբերված թերությունները:
Թվով 425 բակային պոմպակայանում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում թվով 409 հասցեում վերացվել են հայտնաբերված թերությունները:

Ինվերտորների տեղադրում

- Հաշվետու ամսում երեք հասցեներում տեղադրվել է ինվերտորային համակարգ.
- Գառնի պ/կ (Gar-1)
- Թաղևոսյան 6 (She-134)

Ինվերտորային պոմպի տեղադրում

- Հաշվետու ամսում ութ հասցեներում տեղադրվել է ինվերտորային պոմպ.
- Ահարոնյան 2/1 (QZ-33)
- Տիգրան Մեծ 39 (Ke-70)
- Վաղարշյան 1-3 (Ar-122)
- Լուսաձոր պ/կ (Ij-9)
- Խաչատրյան 24 (Ar-71)
- Աթոյան անցուղի 8շ. (Er-9)
- Պարոնյան 4 (Ke-19)

Տեղադրված ընդհանուր 136 ինվերտորային համակարգով պոմպերի սպառած էլ. էներգիան, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել է 51170 կՎտ/ժ-ով՝ 9%-ով:



	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
2022	501,504	372,709	390,383	521,679	526,437	644,073	670,082	645,609	633,544	575,216	480,272	508,726
2023	535,685	537,500	552,067	555,977	609,029	653,140	680,489	700,406	646,571	548,182	515,689	480,075
2024	477,937	477,688	510,523	504,806	0	0	0	0	0	0	0	0

Խոշոր պոմպակայանների էլեկտրաէներգիայի խափանումներ

Հաշվետու ժամանակահատվածում 26 խոշոր պոմպակայաններում էլ. մատակարման խափանումներն օպերատիվ կերպով շտկվել են, իսկ առաջացած թերությունները՝ հայտնաբերվել և վերացվել:

Երևան քաղաքի՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլեկտրաէներգիան

2024թ. ապրիլ ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսն ավելացել է 216 725 կՎտ/ժամ (16,53%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլեկտրաէներգիա



	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր
2022	1110.0	947.1	950.6	1324.0	1552.0	4093.0	4995.0	4767.0	3055.0	1579.0	1001.0	871.0
2023	1090.0	1107.0	1188.0	1310.0	2331.0	3903.0	5168.0	5379.0	3010.0	1441.0	1247.0	1212.0
2024	1,097	1,079	1,222	1,528								

Ջրարտադրության պոմպակայաններում (մարզեր) էլ. էներգիայի ծախսն ավելացել է 307 810 ԿՎտ/ժ/ամիս կամ 18,43 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլեկտրաէներգիա

	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր
2022	2,200.00	1,768.40	1,810.60	1,811.30	1,862.40	2,171.90	2,952.70	3,133.90	2,454.50	1,944.80	1,636.40	1,708.00
2023	1,820.60	1,698.50	1,789.10	1,669.80	2,000.30	2,360.90	2,868.60	3,163.80	2,485.60	2,096.50	1,862.20	1,860.20
2024	1,850.40	1,688.50	1,796.50	1,977.60								

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլ. էներգիան

- Ընդհանուր էլ. էներգիայի ծախսն ավելացել է 472489 ԿՎտ/ժամ 11,64%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլեկտրաէներգիան

3.3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ստորև աղյուսակում ներկայացվում են ապրիլ ամսվա ընթացքում աշխարհագրական տեղեկատվական համակարգում կատարված աշխատանքները.

Աշխատանքի անվանում	Չ/Մ	Քանակ
«ԱՏՀ» բազայում առկա պոմպերի և նրանց միացումների ուղղում և թարմացում՝ «Էներգովերահսկողության» բաժնի կողմից տրված տեղեկատվության հիման վրա	թարմացում	1
SCADA համակարգում առկա կետային տեղեկատվություն տեղորոշում և համապատասխանեցում «ԱՏՀ» բազային	տեղորոշում	1
Գյումրի քաղաքի Շահումյան, Վանաձոր քաղաքի Շիրակի, Համբարձումյան, Տարոն 3 թաղ.-ի փողոցների կոյուղագծերի ուղղում և թարմացում՝ կատարողական գծագրերի հիման վրա	փողոց	4
Ջրագծերի (967.95մ) և կոյուղագծերի (617.34մ) թվայնացում, թարմացում և ուղղում	թարմացում	1
Կապան, Գորիս, Գավառ, Մասիս, Վաղարշապատ, Մարալիկ, Վարդենիս, Վեդի և Եղվարդ քաղաքների ջրամատակարարման ցանցի հիդրավլիկ մոդելների կազմում	քաղաք	9
տեխնիկական պայմանների դիմումների վերաբերյալ դիմորդի տարածքի տեղադիրքի թվայնացում, կազմվում է քարտեզ՝ տարածքում առկա կոմունիկացիաներով, որը մուտքագրվում է փաստաթղթաշրջանառություն: Հաշվետու ժամանակահատվածում կատարվել է 257 գործի թվայնացում՝ 379 բաժանորդ	գործ	257
«ԱՏՀ»-ում առկա մարզերում ջրագծերի և ջրատարների երկարությունը կազմում է 2792 կմ	կմ	9588
157 տեխնիկական պայմանների թվայնացում (367 բաժանորդ)	տեխ.պայման	367
«ԱՏՀ»-ում առկա Երևան քաղաքի ջրագծերի և ջրատարների երկարությունը կազմում է 2792 կմ	կմ	2792
«Ինտերակտիվ» համակարգում իրավաբանական և ֆիզիկական բաժանորդների տեղադիրքի ճշտում, կետերի ուղղում /ֆիզիկական/	կետեր	1400
«Ինտերակտիվ» համակարգում իրավաբանական և իրավաբանական բաժանորդների տեղադիրքի ճշտում, կետերի ուղղում /իրավաբանական/	կետեր	55
«Ինտերակտիվ» համակարգում իրավաբանական և ֆիզիկական բաժանորդների տեղադիրքի ճշտում, բազայում նոր կետերի ավելացում /ֆիզիկական/	կետեր	725
«Ինտերակտիվ» համակարգում իրավաբանական և իրավաբանական բաժանորդների տեղադիրքի ճշտում, բազայում նոր կետերի ավելացում /իրավաբանական/	կետեր	39
«ԱՏՀ»-ում առկա Երևան քաղաքի ընդհանուր կոյուղու երկարությունը կազմում է 1854 կմ	կմ	1854
«ԱՏՀ»-ում առկա մարզային կոյուղու երկարությունը կազմում է 1860 կմ	կմ	1860

3.4. ՋՐԱՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

■ «ՀԷՑ» ՓԲԸ կողմից շինաշխատանքներ կատարելու ընթացքում վնասվել էր Արզական-Խարբերդ ջրատարը: Կազմակերպվեց ջրատարի մասնակի կանգառ, որի ընթացքում ջրատարի ճնշումը նվազեց և հնարավոր եղավ վթարը վերացնել:

■ Ապարան-Երևան ջրատարի վրա՝ դաշտամիջյան հատվածում, առաջացել էր վթար մոտ 15լ/վ մեծությամբ: «Մաշտոց» տեղամասի աշխատակիցների ջանքերով վթարը վերացվել է:

Հաշվետու ամսում կատարվել են նաև ջրաքանակների չափումներ և կարգավորման աշխատանքներ:

3.5 ՔԼՈՐԻ ԵՎ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ընթացիկ ամսում «Ջրառ» ծառայության կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.

■ Քաղաք Սպիտակ, Չախկալ քլորակայանում վերանորոգվել է հեղուկ քլորի համակարգի խափանված վակուում կարգավորիչը՝ հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով:

■ Քաղաք Դիլիջան, Գոլովինո քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու համար վերանորոգվել է հեղուկ քլորի համակարգի խափանված վակուում կարգավորիչը:

■ Քաղաք Իջևան, Գետահովիտ քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով մաքրվել են հեղուկ քլորի համակարգի խցանված քլորագծերը, վերանորոգվել է դոզատորը և վակուում կարգավորիչը:



■ Քաղաք Բուժական, Բուժական քլորակայանում հիպոքլորիդի հաբի սարքավորում մտնող հոսանքի խնդրի կարգավորման համար հիպոքլորիդի հաբի սարքավորում մտնող հոսանքը կարգավորվել է:

■ Քաղաք Մասիս, Արարատյան 3/4 քլորակայանում Արարատյան պոմպակայանի չորրորդ հերթի քլորացման համար մոնտաժվել է դաշտային քլորացման համակարգը:

■ «Մայմեխ» սան. գոտում «Ջրառ» ծառայության ուժերով վերանորոգվեց օպերատորների համար նախատեսված սենյակը:

Հիմնատակի կառուցման աշխատանքներ

Պոմպային ագրեգատի տեղադրման աշխատանքներ

■ «Մաքրավան» պոմպակայանում նոր պոմպային ագրեգատի տեղադրման համար կառուցվել է երկաթբետոնե հիմնատակ: Աշխատանքների ավարտից հետո ք. Հրազդանի Կենտրոն թաղամասի ջրամատակարարումը բարելավվելու համար տեղադրվեց նախատեսված նոր պոմպային ագրեգատը:

■ «Գառնի» պոմպակայանում կառուցվել է երկաթբետոնե հիմնատակ, տեղադրվել է պոմպ, այնուհետև ինվերտորային համակարգ, որի արդյունքում ունեցել ենք էլ. էներգիայի տնտեսում՝ օրական 800կՎտ/ժ կամ ավելի քան 25%: Հաշվետու ամսում N5 պոմպային ագրեգատը փոխարինվել է նորով:

Հիմնատակի կառուցման աշխատանքներ

Պոմպային ագրեգատի տեղադրման աշխատանքներ

3.6 1-85 ԹԵԺ ԳԻԾ

■ Հաշվետու ամսվա ընթացքում 1-85 հեռախոսա-կենտրոնում գրանցվել է 52031 զանգ:

■ Առևտրային բնույթի զանգերի քանակը կազմել է 12637 զանգ, որից Երևան քաղաքինը եղել է 9884 զանգ (78.2%), իսկ մարզերի ցուցանիշը՝ 2753 զանգ (21.8%):

■ Շահագործման բնույթի զանգերի քանակը կազմել է 39394 զանգ, որից Երևան քաղաքինը՝ 28001 զանգ (71.1%), իսկ մարզերինը՝ 11393 զանգ (28.9%):



■ 2023թ. ապրիլի համեմատ՝ 2024թ. ապրիլ ամսին 125,6%-ով ավելացել է ջրամատակարարման զանգերի քանակը:

■ 2023թ. ապրիլի համեմատ՝ 2024թ ապրիլ ամսին ավելացել է հետզանգով սպասարկված զանգերի քանակը 216%-ով:

■ 2023թ. ապրիլ ամսին կատարվել է 13318 հետզանգ, իսկ հաշվետու ամսվա ընթացքում՝ 42123 հետզանգ:

185 հեռախոսային կանչերի օրական հաշվառման հաշվեգիր

	Ստորաբաժանում	2023 Ապրիլ	2024 Ապրիլ	
Առևտրային	Ընդամենը	**10769**	**12637**	17.35%
	Երևան	8159	9884	21.14%
	Մարզեր	2610	2753	5.48%
Շահագործում	**Շահագործում**	21961	39394	79.38%
	Երևան	15533	28001	80.27%
	Արաբկիր	2400	4785	99.38%
	Քանաքեռ-Զեյթուն	1270	2341	84.33%
	Մաշտոց	3569	3031	-15.07%
	Շահումյան	1570	6134	290.70%
	Շենգավիթ	1988	3723	87.27%
	Կենտրոն	2378	3538	48.78%
	Հյուսիս/Ավան Նոր Նորք/	1356	2242	65.34%
	Էրեբունի	1002	2207	120.26%
	Այդ թվում կոյուղու վթար	160	211	31.88%
	Այդ թվում դիտահորի խցանում	4479	4767	6.43%
	ՄԱՐԶԵՐ	6428	11393	77.24%
	Հարավ	3943	6620	67.89%
	Հյուսիս	2485	4773	92.07%
	Այդ թվում կոյուղու վթար	50	625	1150.00%
	Այդ թվում դիտահորի խցանում	2516	3020	20.03%
Ընդամենը		**32730**	**52031**	58.97%

ԼՐԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ապրիլ ամսին Հանրային կապերի ծառայությունը շարունակել է լուսաբանել շահագործման տեղամասերի կողմից ջրագծերի ու կոյուղագծերի վերակառուցման, վթարների վերացման և այլ աշխատանքներ: Դրա հետ մեկտեղ զանգվածային լրատվամիջոցներով նկարահանումներ են իրականացվել Վեղիա ջրի սպասարկման բնակավայրերում ընթացող ջրաշինարարական աշխատանքների մասին: Առաջին այդպիսի համագործակցությունը եղավ «Ֆրի նյուզ» և Լոռու մարզային «Ֆորտունա» հեռուստաալիքների հետ, երբ լուսաբանվեց «KFW» գերմանական զարգացման և եվրոպական ներդրումային բանկերի ֆինանսավորմամբ Լոռու մարզի Կուրթան գյուղի ջրամատակարարման ցանցի բարելավումը: Ռեպորտաժներից բացի, աշխատանքների մասին պատմող տեսանյութերն ու լուսանկարները տեղադրվեցին ընկերության կայքէջում և ֆեյսբուքյան էջում:

Ամիսը լի էր սպառողների համար լավ նորություններով, ինչն էլ ՀԿԾ-ն հրապարակեց ընկերության սոցիալական հարթակներում: Շահագործման հանձնվեց Աշտարակ քաղաքի Ներսես Աշտարակեցի փողոցի վերանորոգված ցանցի մի հատվածը, որը նշանակում է, որ փողոցի 4 բազմաբնակարան շենք՝ 250 բաժանորդով և 60 անհատական տնատիրություն 6-ժամյա ջրամատակարարումից անցան 17-ժամյայի:

Մեծ աշխատանքներ են իրականացվել բակային պոմպակայանների արդիականացման առումով, որի արդյունքները ամփոփվեցին հաշվետու ամսում: Երևան և Գյումրի քաղաքների 87 բակային պոմպակայանների կեսդարյա վաղեմության պոմպեր փոխարինվեցին գերմանական ժամանակակից «Վիլո» ֆիրմայի պոմպերով, որի արդյունքում Գյումրիում 49 շենքերի հարյուրավոր բաժանորդներ նախկին 6 ժամվա փոխարեն արդեն ունեն շուրջօրյա կանոնավոր և բարձր ճնշմամբ ջրամատակարարում, դրան զուգահեռ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ էլեկտրաէներգիայի ծախսը նվազել է 11013 ԿՎտ/ժ-ով:

Արդեն ապրիլի վերջին գործարկվեց «Արարատյան» պոմպակայանը և Հանրային կապերի ծառայությունը լրատվամիջոցների, ինչպես նաև սպառողների բացասական մեկնաբանություններին ի պատասխան հրապարակեց պարզաբանում առ այն, որ ամռան ամիսներին ջրապահանջի ծավալների աճով պայմանավորված մեծանում է ջրասպառումը, և Գառնու, Արզականի աղբյուրների ջուրը պարզապես չի բավարարում Մասիսի տարածաշրջանի որոշ բնակավայրերում, ինչպես նաև Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա, Էրեբունի և Շենգավիթ վարչական շրջանների որոշ հատվածներում կանոնավոր ջրամատակարարումն ապահովելու համար, ուստի ջրամատակարարումն իրականացվում է Արարատյան խորքային հորերից: Վերջինս իր զգայորոշական և ֆիզիկաքիմիական հատկություններով զիջում է լեռնային աղբյուրների ջրերին, սակայն այնուամենայնիվ, համապատասխանում է սանիտարական նորմերին:

Քիչ չէին համակարգում գրանցված արտակարգ պատահարները, որոնց օպերատիվորեն արձագանքեց Հանրային կապերի ծառայությունը պարզաբանումներ ներկայացնելով ոչ միայն ընկերության ֆեյսբուքյան

էջում, այլ նաև մամուլի հաղորդագրություններ ուղարկելով 60-ից ավելի զանգվածային լրատվամիջոցների:

ՀԿԾ-ն Երևանի Էրեբունի վարչական շրջանի Վ. Աճեմյան փողոցում «Վեոլիա Ջուր» ընկերության 400 մմ-ոց ջրատարի վթարին անդրադարձավ անմիջապես հրապարակելով 3 հաղորդագրություն ջրատարի վերականգնման ամբողջ ընթացքից:

Հաջորդ արտակարգ պատահարը Վանաձոր-Ալավերդի-ՀՀ պետական ճանապարհին Լոռու մարզի Վանաձոր քաղաքն ու 13 բնակավայրերը սնող «Նովոսելցովո-Վանաձոր» 1000 մմ-ոց մայրուղային ջրատարի վթարն էր: Իսկ 3-րդն արդեն Շիրակում էր՝ «Ղազանչի 2» 600 մմ-ոց թուջե ջրատարի վրա՝ վայրկյանում 70-80 լիտր ջրի կորստով: Տեղում կատարված լուսանկարներով, տեսանյութերով ՀԿԾ-ը լուսաբանեց ջրատարների վթարավերացման ու վերագործարկման աշխատանքները:

Ընդհանուր առմամբ համակարգում շարունակվել են ջրագծերի և կոյուղագծերի վթարների վերացման, նորացման և վերանորոգման աշխատանքները: Հատկապես հաշվետու ամսում շատ էին գաղտնի վթարների հայտնաբերման աշխատանքները, որոնց վերացման արդյունքում մեծ ջրաքանակ է խնայվել Արթիկում, Չարենցավանում, Երևանում, Մարտունիում, Արագածոտնում, Լճափում, Էջմիածնում, Պառոյան և Նորակերտ գյուղերում: Իսկ ահա Գավառ քաղաքի Բոշնաղյան փողոցում սկսվեց 380 գծամետր ջրագծի վերանորոգման աշխատանքները:

Վեոլիայի համակարգում շատ կարևոր իրադարձություն էր «Վեոլիա» ընկերության Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների գծով տնօրեն, փոխնախագահ Ֆիլիպ Գիտարինի այցը Հայաստան, ով պաշտոնական հանդիպում ունեցավ փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի հետ: Այս կարևոր հանդիպումը լուսաբանվեց ընկերության կայքէջում և ֆեյսբուքյան էջում:

Ապրիլ ամսին ֆեյսբուք սոցիալական ցանցի միջոցով հիշատակվել է Ցեղասպանության օրը, ինչպես նաև տեղեկատվական հրապարակումներ են եղել Բաժանորդների սպասարկման գրասենյակների աշխատաժամերի մասին: Շատ են եղել հրապարակումներ ընկերության կարիքների համար պահանջվող ծառայությունների կամ ապրանքների մատակարարման, վթարային ու պլանային ջրանջատումների մասին:

ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

5.1. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ/ՍԵՄԻՆԱՐՆԵՐ

«Առողջության և Անվտանգության» պայմանագրի երկրորդ կետով և Վեոլիա Գրուպի ընթացակարգերով սահմանված պահանջներով՝ առաջին եռամսյակի ընթացքում Ընկերության Հյուսիս և Հարավ Շահագործման տնօրինություններում շահագործման տեղամասերի պետերի կողմից իրականացվեցին Վեոլիա Գրուպի Կյանքը փրկող կանոնների վերաբերյալ հանդիպում/քննարկումներ թվով 151 աշխատակցի հետ:

Հիմք ընդունելով Վեոլիա Գրուպի Բարձր Ռիսկերի Կառավարման Ստանդարտների պահանջները, ինչպես նաև հաշվի առնելով Ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման բաշխիչ ցանցերում իրականացվող վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում անվտանգության տեխնիկայի կանոնների ապահովման մակարդակի շարունակական բարձրացման, աշխատանքների կատարման նկատմամբ պատշաճ հսկողության սահմանման անհրաժեշտությունը, Բաժինը Ընկերության Հյուսիս Շահագործման տնօրինության թվով 124 աշխատողի համար կազմակերպեց և իրականացրեց ստորև ներկայացվող 5 մոդուլից բաղկացած առկա դասընթացները:

- Վեոլիա Գրուպի «Աշխատանքներ փակ տարածքում» ԲՌԿ ստանդարտի պահանջները,
- Վեոլիա Գրուպի «Աշխատանքներ բարձրության վրա» ԲՌԿ ստանդարտի պահանջները,
- Վեոլիա Գրուպի «Վտանգավոր էներգիայի վերահսկում» ԲՌԿ ստանդարտի պահանջները,
- «ԱՊՄ-ների և ԿՊՄ-ների դերը և նշանակությունը»
- «Շինհրապարակների անվտանգ կազմակերպման պահանջներ» թեմաներով դասընթաց:

- ՈԱԱ բաժինը (ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ), ղեկավարվելով Ընկերության Գլխավոր տնօրենի 2022 թվականի հունվարի 24-ի թիվ 02Լ հրամանի և հրամանին կից կարգի պահանջներով, ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 88-րդ հոդվածի և 254-րդ հոդվածի պահանջներով, ինչպես նաև Հայաստանի հանրապետության Տեխնիկական կանոնակարգերի և Արտակարգ իրավիճակների նախարարի 2015 թվականի հունիսի 18-ի N 595-Ն հրամանով հաստատված «Հրդեհային անվտանգության կանոնների» 454-րդ կետի 6-րդ ենթակետի պահանջներով, «Որակավորում եռակցողների. Պողպատի եռակցում հալումով ՄԱՍ 1» ստանդարտի պահանջներով, ինչպես նաև Վեոլիա Գրուպի Բարձր ռիսկերի կառավարման ստանդարտի պահանջներով, Ընկերության Տեխնիկական, Հյուսիս, Հարավ Երևան և շահագործման տնօրինությունների թվով 56 աշխատողի համար կազմակերպեց և իրականացրեց ստորև ներկայացվող 4 մոդուլից բաղկացած առկա դասընթացները և գիտելիքների ստուգումը:
  - «Էլեկտրագազաեռակցման աշխատանքներին ներկայացվող անվտանգության պահանջներ»,
  - «Առաջին օգնություն ցուցաբերելու եղանակները»,
  - Վեոլիա Գրուպի «Աշխատանքներ փակ տարածքում» ԲՌԿ ստանդարտի պահանջներ և
  - Կյանքը փրկող կանոններ թեմաներով դասընթացը:

- Հաշվետու ամսում տեղի ունեցավ «Առողջության և անվտանգության առաջնորդության» երկրորդ դասընթաց՝ Ընկերության ղեկավար անձնակազմի թվով 16 աշխատողի համար, որը վարում էր Վեոլիա Գրուպի կողմից հրավիրված դասընթացավար՝ «NEW HSE» ընկերության գլխավոր տնօրեն Ժանետ Արշիմովան:

Դասընթացը միտված էր Ընկերությունում առողջությանը և անվտանգությանն ուղղված ռիսկերի կանխարգելմանը, կառավարմանը, անվտանգության մասով գիտելիքների ամրապնդմանը և շարունակական բարելավմանը, աշխատողների շրջանում Անվտանգության դերի բարձրացմանը, Ընկերության համակարգում անվտանգ աշխատանքի մշակույթի ձևավորմանը և այդ մշակույթը ընկերության կառուցվածքային բոլոր ստորաբաժանումների ղեկավարների, աշխատողների, ժամանակավոր աշխատողների և գործընկերների շրջանում տարածմանը:

Ընկերության առաջնահերթությունը ամենակարևոր ռեսուրսի՝ մարդու կյանքի և առողջության պահպանումն է և այդ առնչությամբ Ընկերության ղեկավար անձնակազմի նպատակն է չունենալ աշխատողների շրջանում աշխատունակության կորստով ճասվածքներ, մահվան և մասնագիտական հիվանդությունների դեպքեր և բոլոր այսպիսի դեպքերը, ինչպես նաև վերջիններիս հանգեցնող ռիսկերը, դասընթացի արդյունքում ստացած գիտելիքների, համատեղ թիմային աշխատանքի, աչալրջության և պրոֆեսիոնալիզմի արդյունքում արդյունավետ կառավարել և կանխարգելել:

2023-2024թթ. կազմակերպված դասընթացներին/հրահանգավորումներին մասնակցած աշխատակիցների քանակների համեմատական գրաֆիկ



2023-2024թթ. կազմակերպված դասընթացներին/հրահանգավորումների ժամային համեմատական գրաֆիկ



5.2. ՌԻՍԿԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ/ՄԵՂՄԱՅՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ

Բաժնի անվտանգության պատասխանատուներն իրականացրեցին անվտանգության ստուգայցեր Ընկերության թվով 4 քլորակայանում և 1 ՋՄԿ-ում: Ստուգայցերի նպատակն էր իրականացնել ռիսկերի գնահատում և կառուցվածքները շահագործող անձնակազմերի կողմից Ընկերությունում հաստատված անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակի մոնիթորինգ:

ՈԱԱ Բաժնի կողմից ուսումնասիրվել են Ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերում իրականացվող թվով 63 վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում տեղամասերի վթարավերականգնողական աշխատանքային խմբերի կողմից անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակը, տեղում տրվել են ցուցումներ անվտանգության գործընթացի արդյունավետ կազմակերպման՝ մասնավորապես ԱՊՄ-ների կիրառման, մշակվող խրամուղիների պարագծով գծանշման, ծանր տեխնիկայի շահագործման ուղղությամբ, ինչպես նաև արձանագրված թերությունների վերաբերյալ կազմվեցին հաշվետվություններ և ներկայացվեցին Ընկերության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին՝ արձանագրված թերությունների շտկման նպատակով:

2024 թ. իրականացված անվտանգության ստուգայցների քանակներն ըստ օբյեկտների



5.3 ՎԵՈԼԻԱ ԳՐՈՒՊԻ ԲՌԿ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՄԱՆ, ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ, ՆՈՐ ԲՌԿ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՎՈՎ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌԱՊՏԱՅՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Հաշվետու ամսում ևս իրականացվել են Վեոլիա Գրուպի նոր խմբագրության Բարձր Ռիսկերի կառավարման ստանդարտի հայերեն լեզվով թարգմանության և առապտացման աշխատանքներ, ինչպես նաև Բարձր Ռիսկերի կառավարման ստանդարտի ինքնագնահատման աշխատանքներ:

5.4. ԱՊՄ-ՆԵՐԻ ԵՎ ԿՊՄ-ՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Բաժինը, հաշվի առնելով ինժեներատեխնիկական անձնակազմերի կողմից իրականացվող գործառույթների բնույթը, դրանց կատարման ընթացքում ի հայտ եկող հնարավոր վտանգները և վերջինիս հետ կապված ռիսկերը, հիմք ընդունելով ՀՀ գործող ստանդարտների և Գրուպի ԲՌԿ Ստանդարտների պահանջները, հաշվետու ամսում Ընկերության Ջրամատակարարման և Ջրահեռացման բաշխիչ ցանցերում իրականացվող վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում անվտանգ աշխատանքային պայմաններ ապահովելու նպատակով՝ իրականացրեց ճանապարհային ժամանակավոր նշանների և այլ անհրաժեշտ ԿՊՄ-ների, եռակցողների արտահագուստի և կոշիկի կարիքների գնահատման և անհրաժեշտ քանակների ձեռքբերման աշխատանքներ:

VEOLIA
Ջուր

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ
ՀՀ, 0014, ք.Երևան, Ն.Ադոնցի 6/1
ՀՀ, 0025, ք.Երևան, Արովյան 66ա
E-mail: info@vjur.am